№ 167 Հոկտեմբերի 2 (14) 1879 Հոկտեմբեր (14) № 167

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վիէննայի տեսակցութիւնը։— Ներքին տեսութիւն։ Նամակ Համդաչիմանից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։ —Արտաքին տեսութիւն։ «Մասիսի» թղթակցութիւնը։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։— Բանասիրական։ Մոսկվայի հայոց եկեղեցու հանդէսը։

ՎԻԷՆՆԱՅԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

—

Այս րոպէիս Վիէննա քաղաքը դրաւած ունի իր վրա ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը։ Այդտեղ տեղի ունեցաւ երկու պետութիւնների՝ Աւստրո-Ունգարիայի և Գերմանիայի ներկայացուցիչների տեսակցութիւնը։ Այդտեղ մշակվում են Թիւրքիայի ապագայ կառավարութեան մասին օրդանական կանոնադրութիւններ, կամ պլաններ, այդտեղ եւրոպական պետութիւնների մէջ դերեր են բաժանվում թէ Նրանցից ով պէտք է վերահսկի Թիւրքիայի եւրոպական նահանգների վրա, ով ասիական նահանգների վրա։ Այսպիսով Անգլիային և Ֆրանսիային յանձնվում է կենտրոն Ասիայում, իսկ Գերմանիային և Աւստրո-Ունգարիային Եւրոպայում։

Բայց այդ բոլոր պլանները պէտք է որ ուրիշ մի խորհուրդ էլ ունենան։ Անկարելի է մոռանալ որ Գերմանիան մօտենում է Աւստրիային միմիայն արևելեան խնդիրը այս կամ այն կերպ վճռելու համար։ Հաւանական է որ նա այդ քայլն անելով և իր մասնաւոր, եսական նպատակներն ունի։

Ինչպէս յայտնի է Գերմանիան միացաւ հետզհետէ, նախ 1866 թուին Աւստրիայի դէմ պատերազմ վարելով, որի հետևանքն եղաւ գերմանական հիւսիսային դաշնակցութեան կազմելը, յետոյ Ֆրանսիայի դէմ պատերազմելով, որից յետոյ միացրեց իրան Լոյզաս-Լօթարինգիան։ Այժմ կատարելապէս միացած պետութիւն լինելու համար Գերմանիային պակաս են դեռ Աւստրիայի գերմանական նահանգները։ Հաւանական է որ Գերմանիան երկրորդ անգամ պատերազմ չի սկսի Աւստրիայի դէմ վերջնական միութեան գործը գլուխ բերելու համար։ Առաջուց կարելի է գուշակել որ նա կը ձգտի հասնել իր ցանկացած նպատակին բոլորովին մի այլ ճանապարհով։ Առաջուց կարելի է գուշակել որ Գերմանիան Աւստրիայի գերմանական նահանգները իրան միացնելու նպատակով խաղաղ ճանապարհ կընտրէ, կը կապէ Աւստրիայի հետ մի տեսակ դաշնակցութիւն, կը սկսի նրա հետ մի տեսակ առուտուր։ Եթէ Աւստրիան զիջանի Գերմանիային իր գերմանական նահանգները, դրա փոխարէն Գերմանիան թոյլ կը տայ Աւստրո-Ունգարիային բարոյապէս տիրել ամբողջ Բալկանեան թերակղզու վրա, այսինքն ձգտել հաստատել մի սլավեանական-ունգարական դաշնակցութիւն։ Այն ժամանակ Թիւրքիայի ոյժը Եւրոպայում հետզհետէ կը նուազի, գուցէ ժամանակով Թիւրքայ պետութիւնը, որպէս եւրոպական պետութիւն, կանհետանայ աշխարհիս երեսից և յետ կը մղվի դէպի Ասիան։

Այդ տեսակ հաւանական երեւոյթին Թիւրքիայի հայերը պէտք է պատրաստ լինեն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ԹԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՅՈՐԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԷՍԸ

Սեպտեմբերի 16-ին տօնեց իր հարիւրամեայ յոբելեանը Մոսկվայի ս. Խաչ եկեղեցին, որ հիմնված է 1779 թ. 16-ին սեպտեմբերի։ Դեռ մի քանի օր առաջ հրատարակված էր այստեղի լրագիրներում, որով հրաւիրվում էր Մոսկվայի հայ հասարակութիւնը մասնակից լինել այս ազգային հանդիսին, որ կատարվելու էր նախ եկեղեցում, և ապա Լազարեան ճեմարանի դահլիճներում։ Հանդէսը ըսկվեցաւ յոբելեանին առիթ տուող ս. Խաչ եկեղեցում, ուր այս մեծ տօնի պատճառով ժողովվել էր մեծ բազմութիւն թէ արական և թէ քնքոյշ սեռի. եկեղեցում կանգնելու տեղ չը կար. եղանակի մեղմութիւնը և պայծառութիւնը նոյնպէս նպաստում էր այս աւուր փառաւորութեանը։

Պատարագից յետոյ, որ շատ հանդիսաւոր էր, մի քանի խօսք խօսեց Ամբրոսիոս վ. Ռուբինեանցը եկեղեցու հարիւրամեակի մասին և երբ որ կատարվեցաւ հոգեհանդիստ Լազարեանց բարեհռչակ տոհմին, ժողովրդի խուռն բազմութիւնը՝ դուրս գալով եկեղեցուց, դիմեց Լազարեան ճեմարան, որ ս. Խաչ եկեղեցու դէմուդէմն է։

Հոյակապ ճեմարանը իր արիաջան տեսչի հոգատարութեամբ և խնամքով այսօր աւելի հոյակապ և փառաւոր տեսարան էր ընդունել. հանդիսական դահլիճը, որի չորս կողմը կանգնած են պղնձեայ և մարմարիոնեայ արձաններ և անդրիք և որի պատերից կախված են Լազարեան տոհմի բոլոր ներկայացուցիչների մեծադիր պատկերները—զարդարված էր մանր ծառերով, դալար կանանչներով և գոյնզգոյն ծաղիկներով. իւրաքանչիւր պատկերի ճակատը պսակված էր դափնեայ պսակով. մանաւանդ գեղեցիկ էր Լազարեանցների վերջին ներկայացուցիչ վեհաշուք Խաչատուրի սպիտակ մարմարիոնեայ անդրին՝ պատած և զարդարած խոշոր վարդերով. ներկայ օգոստափառ Կայսեր հասակչափ պատկերը, որ. կախված է դահլիճի մէջը, նոյնպէս պատած էր սիրուն ծաղիկներով և իր ճակատին ունէր մի ահագին դափնեայ պսակ. այս պատկերի առաջ դրած էր կաթեղրան ատենաբանութեան համար. թարմ կանանչի և ծաղիկների հոտը բուրում էր օդի մէջ.... Ժամը 1½ մոտն դահլիճ Լ. ճեմարանի աշակերտները և շարվեցան 4 կարգ աթոռների ետևը, որ պատրաստված էր հանդիսականների համար՝ կայսեր պատկերի դէմուդէմը. աշակերտների երդեցիկ խումբը տեղաւորվեցաւ հանքարանական դահլիճի մէջ, որ միանում է հանդիսական դահլիճի հետ սիւնազարդ կամարով. հանդիսականները նոյնպէս բռնեցին իրանց տեղերը. բազմութիւնը այնչափ մեծ էր, որ չատերը՝ նոցա թուում և ուսանողների մի խումբ, կանգնեցան մատենադարանի դահլիճում, որ նոյնպէս միանում է գլխաւոր կամ միջին դահլիճի հետ սիւնազարդ կամարով։ Ամենքը անհամբերութեամբ սպասում էին հանդիսի սկսվելուն։ Ցանկարծ մի ներդաշնակ ձայն գրաւեց բոլորի ուշադրութիւնը. այդ երգեցիկ խումբն էր, որ սկսեց «ով Տէր Աստուած» աղօթքը. չչնչինը դադարեցաւ. բոլորեքեան ակնածութեամբ և պատկառանքով ոտի կանգնեցան։

Աղօթքը վերջացաւ. հանդիսականները նստան իրանց տեղերը. ահա Մոսկվայի աւագ քահանայ Սուրէնեանցը՝ բարձրանալով կաթեղրայի վրա, ըսկսեց կարդալ մի ճառ։

Երկու նուիրական հիմնարկութիւններ—եկեղեցին և ուսումնարանը—որոնք անխզելի կապերով միացած պիտի լինեն միմեանց հետ, և նրանց վրա սեմ խորհուրդը մարդկութեան համար—ահա թէ ինչ էր արժանապատիւ քահանայի ճառախօսութեան ընթացքը։ Այդ երկու ամենամեծ հիմնարկութիւններն են, ասում էր նա, այն երկնատու բարիքը, որ կարող է ունենալ մի հասարակութիւն. և նոցա կանոնաւոր աւանդութիւնը պէտք է համարել ամենաճշմարիտ գրաւական այդ հասարակութեան բարոյապէս և ֆիզիքապէս զարգանալուն և բարգաւաճելուն.... Ո՞րքան ուրեմն բաղդաւոր ենք, բացագանչեց նա, մենք Մոսկվայի հայերս, որ մասնակից ենք մարդկութեան այդ ամենամեծ բարիքներին և այժմ—այս փառաւոր ուսումնարանում՝ հարիւրաւոր ուսանողների և հանդիսականների հետ միասին մենք ողջունում ենք մեր սուրբ եկեղեցու հարիւրամեայ արդիւնաւոր գոյութիւնը.... Ապա մի հայեացք ձգելով ս. Խաչ եկեղեցու պատմութեան վրա և ցոյց տալով այն յառաջադիմութիւնը, որ գործել է Մոսկվայի հայ հասարակութիւնը 100 տարվայ շրջանում, նոյնպէս մեկնելով Լազարեանց տոհմի մեծ ազդեցութիւնը ընդհանուր ազգի համար—վերջացրեց մեծապ. քահանան իր եռանդուն ճառը։ Մի ջերմ և միահամուռ ծափահարութիւնների որոտումն բարձրացաւ դահլիճի մէջ. այդ—հասարակութեան անկեղծ համակրութեան նշանն էր։

Կրկին հնչեց հայկական երգը. այդ մանուկներն էլ՝ կարծես թէ մի առանձին ոգևորութիւն էին ստացել այդ օրը—այնպէս քաղցր և ներդաշնակ էր նոցա երգեցողութիւնը.... Երգի ձայնը լռեց. խաղաղութիւնը կրկին տիրեց դահլիճում. ահա բարձրացաւ կաթեղրայի վրա ճեմարանի տեսուչ պ. Քանանեանցը և սկսեց ռուսաց լեզուով մի գեղեցիկ ատենաբանութիւն։

..... «իմ կարծիքովս՝ երկու ամենաճիշդ նշաններ կան, ասաց նա, որոնցով կարելի է բացատրել իւրաքանչիւր հասարակութեան բարոյական կեանքի տոկունութիւնը և երկարակեցութիւնը. առաջինը՝ երբ որ նա պարզապէս ճանաչում է իր բարոյական պարտքը և հոգեկան շահերը, և երկրորդ՝ երբ որ նա սրբութեամբ պատվում և պաշտում է իր արդիւնաւոր հասարակական գործիչների վաստակները։ Այս րոպէիս մենք կանգնած ենք երես առ երես հասարակական յառաջադիմութեան այդ երկու սիմպտոմների հետ.... Եւ իրաւի, ինչ կարող էր միացնել այսքան հեռու և օտար քաղաքացիներ, ինչ էր դրդում այս բոպէիս միմեանց մերձենալ և մեկնել ձեռք ընկերութեան և եղբայրսիրութեան—ինչ—եթէ ոչ մի կենդանի կապ մարդկութեան ամենաթանկագին բարոյական շահերի հետ. ինչ, եթէ ոչ մեր արդիւնաւոր գործիչների բարոյական արդասիքը և նոցա խնկելի յիշատակը բերեց մեզ այս յարկի տակ, որ պահում է իր մէջ այնքան միսիթարական աւանդութիւններ, այնքան գեղեցիկ յիշողութիւններ....»

Եւ ապա՝ մի առ մի յիշելով Լազարեանց տոհմի ներկայացուցիչների մեծամեծ ծառայութիւնները, որ նոքա զանազան ժամանակ մատուցել են իրանց ազգին—մանաւանդ կանգնելով այս հարիւրամեակ կատարող ս. Խաչ եկեղեցին և հռչակաւոր ճեմարանը—պատուելի ատենաբանը ապացոյց տուեց, թէ ոչինչ յոբելեան, ոչինչ աղդուտ հիմնարկութիւն, անդամ և անձնական ապահովութիւն լինելու չէր մեզ համար, եթէ որ այս բոլորին հովանաւոր և պաշտպան չը լինէին ռուսաց մեծազօր թագակիրները. և այժմ ներկայ բարեխնամ Կայսրն է, որ միշտ քաղցր աչքով է նայած հայերին և որի վրա է մեր թշուառ տաճկահպատակ եղբայրների փրկութեան յոյսը.... Եւ դառնալով դէպի Կայսեր պատկերը, բարեմաղթենք, ասաց նա, որ աստուածային աջը միշտ հովանի լինի այն մեծ տէրութեան վրա, որ այսքան բարիք է տուել մեր ազգին վայելելու և վերջացնենք մեր բարեմաղթութիւնները ամենքիս համար թանկագին խօսքերով. «Կեցցէ ազգերի ազատիչ ռուսաց մեծազօր Կայսրը Ալեքսանդր II»։

Ծափահարութիւնները ամպի պէս որոտացին դահլիճի կամարների տակ. ճառի ազդեցութիւնը շատ մեծ էր.....

Վերջին անգամն էլ հնչեց հայկական երգը և հանդիսականները յայտնելով իրանց շնորհակալութիւնը ճեմարանի վերատեսուչ պ. Դելեանեանցին և ժրաջան տեսուչ պ. Քանանեանցին—պատրաստվում էին հրաժարական տալու։ Այս միջոցին ստորագրութիւն բացեց Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետը երկրագործական ուսումնարանի համար և 900 ռուբլու չափ գումար ժողովեց։

Հանդէսը վերջացաւ մի հանգստ նախաճաշով, որ պատրաստած էր ճեմարանի վերին դահլիճներում 50 մարդու համար՝ կանխագոյն ստորագրութեամբ։ Նախաճաշի ժամանակ հանդիսականներից մինը մի քանի խօսք խօսեց ս. Խաչ եկեղեցու յոբելեանի մասին և նկարագրելով Մոսկվայի 3 եկեղեցիների չքեղ և պայծառ դրութիւնը, շնորհակալութիւն յայտնեց ներկայ երեսփոխան պ. Փանեանցին, որ շատ նպաստել է այդ «փառաւոր և օտարաց նախանձելի վիճակին»։ Մի շնորհակալութեան թուղթ (адресъ) 40—50 ստորագրութիւններով այդ տեղ իսկ մատուցին պ. Փանեանցին նորա 12 ամեայ երեսփոխական բազմաջան ծառայութիւնների համար։

Վերջացնելով մեր նամակը չենք կարող չը յայտնել մեր խորին շնորհակալութիւնը Լազարեան ճեմարանի տեսուչ մեծապ. Քանանեանցին, որ այնպէս սիրով ընդունեց հայ հասարակութիւնը ճեմարանի դահլիճներում և ոչինչ չը խնայեց իր կողմից յոբելեանը շքեղ և փառաւոր անելու։

Նոյնպէս պէտք է շնորհակալ լինել և արժանապ. հայր Սուրէնեանցին, որ թէ իր ճառախօսութեամբ և թէ մանաւանդ իր մեծ գրաւոր աշխատութեամբ այնպիսի ժողովրդականութիւն տուաւ այս հանդիսին, որոյ նմանը տարաբաղդաբար շատ սակաւ է պատահում մեր հիւսիսում....

Գ. Խ.

Եթէ Եւրոպան անտարբեր աչքով կը նայի ինչպէս Գերմանիան կատարելապէս կը միանայ, ինչպէս Աւստրօ-Ունգարիան, իր գերմանական նահանգներից զըրկված, կը դառնայ ունգարական-սլավոնական երկիր և հետզհետէ Թիւրքիայի տեղը կը բռնի Նրա Եւրոպական նահանգներում, իսկ Թիւրքիան յետ մղված կը լինի դէպի Փոքր-Ասիան,—այն ժամանակ Թիւրքաց հայերը պէտք է պատրաստ լինեն իրանց բարոյական ոյժերը կազմակերպելու, պէտք է այնքան քաղաքագէտ լինեն որ կարողանան իրանց մասին ձայն հանել, պէտք է կարողանան իրանց ազգային իրաւունքների մասին վկայել։ Եթէ Գերմանիայի դիտաւորութիւնները իրագործվեն, այն ժամանակ Թիւրքաց հայերը պէտք է պարզ հասկանան, որ Թիւրքիան դառնալով միմիայն ասիական պետութիւն, տիրապետելով միմիայն Փոքր-Ասիայում, հայերին վիճակված կը լինի առաջին դեր խաղալ այդ պետութեան մէջ, իսկ դուցէ և պաշտօնապէս Թիւրքիայի տեղը բռնել, եթէ ժամանակով Թիւրքիան, որպէս պետութիւն, կատարելապէս կը քայքայվի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԶԱՉԻՄԱՆԻՑ

—

20 սեպտեմբերի

Սեպտեմբերի 20-ին, մի մռայլ և ամպամած առաւօտ, դուրս գալով մեծ Ղարաքիլիսից մի եռանդոտ և սիրելի երիտասարդի հետ, որ իր սուր զուարճախօսութեամբ մոռանալ էր տալիս թէ ճանապարհի երկարութիւնը և թէ օրվան տխուր տրպաւորութիւնը, գնում ենք Համզաչիման։ Մի քանի բօպէից յետոյ պատահեցինք ճանապարհի վրա գտնված մի չինութեան. սա սուրբ Կիրակի ուխտատեղին է, որ իր սեփական ծախսով չինել է Ղարաքիլիսի բնակիչ մի հարուստ և բարեպաշտ քրիստոնեայ։ Սուրբ Կիրակին, ինչպէս պատմում են փամբակի պառաւները, մի հրաշագործ ուխտատեղի է, տալիս է շատերի մուրազը, բժշկում է անբժշկելի հիւանդութիւններ, սպիտակ ձիով, օխտը գլխանի մզրաղով, կարմիր բինիշով միշտ երևում է ջերմեռանդ պառաւներին երազներում։ Իմ ընկերակից պարոնը իր ջերմեռանդ քրիստոնէութեան վրա մի գաղափար տալու ինձ, երեսը մի քանի անգամ խաչակնքելով և քթի տակ մի խնդրուած մռմռալով, հեռացանք սուրբ Կիրակիից և կէս ժամից յետոյ մտանք հայ և թուրք ժողովրդից բաղկացած կեղտոտ և ցեխոտ Վարդանլի գիւղը։ Ցների անտանելի և վատ դրութեան մասին ոչինչ չունեմ ասելու։ Հայերը ունեն մի գեղեցիկ եկեղեցի, որի դռները ամիսը երկու անգամ հաղիւ են բացվում մի մշտական քահանայ չունենալու պատճառով։ Այս տեղի ժողովուրդը հոգևոր մխիթարութիւններից շատ զուրկ է. պատահած օրինակատարութիւնները կատարում են երթևեկ քահանաները։ Արդեօք ում պարտականութիւնն է կարգադրել, որ մի քահանայ ամեն բօպէ այս գիւղում լինի և ժողովրդին բարոյապէս մխիթարէ և աղատէ դրացի թուրքերի ամենօրեայ սուր սուր ծաղրածութիւններից։ Դուրս գալով այս ամեն կողմից անմխիթար գիւղից և երկու կողմի լեռնաշղթաների միջով շարունակեցինք մեր ճանապարհը, մտանք անտառը և պատահեցինք մեծ Ղարաքիլիսի գոմերին, որտեղ ղարաքիլիսեցիք իրանց տաւարն են պահում։ Կը նշանակէ, ղարաքիլիսեցիք լաւ են հասկացել որ առհասարակ անասնոց բնակարանները պէտք է բնակիչներից հեռու լինեն զանազան կարևոր պատճառների համար։ Կամաց կամաց հեռանալով մտանք Վասկրեսենկայ մալականի գիւղը, որ շատ բանելով բարձր էր փամբակի մի քանի գիւղերից. տները չինված են մի ուղղութեամբ երկու զուգահեռական գծերի վրա և նորանց առաջները ամենքն էլ ծառեր տնկելով երկար ու ձիգ փողոցը դարձրել են մի գեղեցիկ ծառուղի, որի միջով անցնում է խճուղին։ Այս գիւղի գլխաւոր պակասութիւնը այն է, որ բոլոր տների կտուրները ծածկված են խոտով, որ հրդեհի վերաբերութեամբ շատ վտանգաւոր է։ Գիւղը մըտած բօպէին լսելի եղաւ մի խառնաչփոթ աղմուկ և իսկոյն երևաց աղմկարար բազմութիւնը, որ հաւաքված մի այրվող շինութեան վրա, աշխատում էին հրդեհը հանգցնել։ Բարեբախտաբար թէ օրն էր անձրևոտ և թէ աղբիւրը այրվող տան մօտից էր վազում, եթէ ոչ, մի չոր և քամի օր պատահէր, 10 գիւղ թափէր չէր կարող հրդեհի առաջը առնել, քանի որ պատերը, յատակը և առաստաղը ամենաչոր փայտից են և կտուրները չոր խոտով են ծածկված։ Ամենահասարակ դիպուածից կարող է այստեղ հրդեհ պատահել։ Անցկացանք այս գիւղն էլ, ժամը 9-ին մտանք 109 տանից բաղկացած Համզաչիման գիւղը, որ դրված է հիւսիսային լերկամարմին լեռան ստորոտի վրա։ Աղբիւրներ, վտակներ, կանաչ մարգագետիններ անպակաս են այստեղ։ Մի քանի քայլ հեռու հարաւային լեռան կողերի վրա գտնված խիտ անտառը ոչ միայն կերակրում է անհամար անասուններին և զանազան օգուտներ տալիս գիւղացոց, այլ և մի առանձին գեղեցկութիւն է տալիս Համզաչիմանին։ Ի՞նչպէս նկարագրենք Համզաչիմանը, որ տարաբաղդաբար է ընկել բնութեան առատ բարիքների մէջ, բայց իր տարօրինակ ծուլութեամբ, ծայրայեղ անտարբերութեամբ ոչինչ օգուտ չէ կարողանում քաղել բնութեան այդ առատ պարգևներից։ Այո, աղբիւրները պատրաստ են, մարգագետինները ընդունակ, անտառը կէս վերստ հաղիւ հեռու կը լինի գիւղից, բայց այսօր այդ ծոյլ համզաչիմանցիներից ոչ մէկը մի ծառ, մի թուփ, մի պարտէզ, մի բանջարանոց չունի դռների առաջ կամ գիւղի մէջ։ Այս գիւղացոց պարտէզը իրանց տաւարի աղբանոցն է, որ տարուց տարի իրար վրա դարսելով ուղղակի դռների առաջ մի մի բլուրներ են դոյացել։ Անձրևների ժամանակ երբ փափկանում են այդ դարչելի աղբանոցները՝ արտադրում են իրանցից սրճագոյն առուակներ և անուշ բուրմունքներ։ Մինթէ համզաչիմանցիք այնքան ծոյլ են, որ չեն կամենում տաւարից դոյացած չարաթական աղբը սայլով կրել կամ իրանց արտերի մէջ փռել, որ շատ օգտակար է, և կամ անուից մի քանի արշին հեռու թափել։ Երբ որ ամեն մարդ ունենայ սայլ և եզ, աղբը գիւղից դուրս թափելու համար էլ ինչ դըժուարութիւն կայ։ Ես կարծում եմ որ այս տեսակ անուերվի վնասակար կեղտոտութիւնները դռների առաջից հեռացնելու համար, մեծ պարտականութիւն կայ գիւղի քեօխվի վրա, որ իրաւունք ունի ուղղակի բռնութեամբ մաքրել տալ գիւղը։ Ես էլի կրկնում եմ, այսպիսի խոտոտ, ջրոտ և դրախտավայր տեղերում բնակվել և գիւղի մէջ մի պարտէզ, մի ծառ չունենալ. զարհուրելի ծուլութիւն և մեռելութիւն չէ, բա, ինչ է։ Սիրելի համզաչիմանցիք, գոնէ ձեզանից երկու վերստ հեռու բնակվող մալականներից ամաչեցէք. եթէ նոքա կարող են ունենալ այնպիսի գեղեցիկ բանջարանոցներ, և դռների առաջ ծառեր, դուք ինչի չը պիտի ունենաք։—Իսկ ինչ վերաբերում է գիւղի խրճիթներին, Աստուած փրկէ, աղատէ, բացի պ. Մատինեանցի տանից, որ ինչպէս տեղական ուսուցիչը պատմեց, հարիւր հազար բուրլու կարողութիւն ունի, և մի հոյակապ փառաւոր եկեղեցուց, մնացեալ տները ես չը գիտեմ Ղարաքիլիսայի գոմերից ինչով են զանազանվում։ Հիւսիսային կողմից երբ որ նայում ես գիւղի վրա, համարեա ոչ մի պատ չես տեսնում. երևում են իրար կպած մանր մանր հողակոյտեր չոր փայտերով չրջապատած որ տաւարները չը բարձրանան կտուրը։ Վնասակար սովորութիւններից մէկն էլ այս է որ խոտի դէզերը բոլորն էլ գիւղի մէջն են դարսում, որ եթէ մի մանաւոր հրդեհ պատահի, ամբողջ գիւղը կարող է այրվել։

Ժամը 10-ին մտանք ծխական դպրոցը։ Վարժապետը չը կար։ Աշակերտները մանկական խաղերով էին զբաղված։ Մեծ աշակերտները քաղաքավարութեամբ ոտի կանգնեցին և ընդունելով մեր ողջոյնը, կրկին նստեցին, երբ որ իմ ընկերակից պարոնը նստելու նշան տուեց։

—Ո՞ւր է վարժապետը, հարցրինք մենք։

—Գիւղի մէջ գործ ունի, գնացել է գործին.....

—Ի՞նչ գործ ունի։

—Վարժապետի տաւարը գնացել է հարևանի խոտը կերել է, հիմի խոտի տէրը տաւարը էս չորս օր է քաղցած պահում է և վարժապետից վնասը պահանջում։

Մենք սկսեցինք պարապել աշակերտների հետ. հ. լեզու, ռ. լեզու, թուաբանութիւն հարցնելուց յետոյ, կարմիր համարիչը ձեռին, դեղնագոյն չերքեզկեն սպիտակ արիալուղի վրա կաչէ գօտով ամրացրած, ներս մտաւ վարժապետը. «ձեր շունը հեռուից տեսնելով դպրոցի լուսամտի առաջ խոկոյն հսկացայ որ մարդ է եկել...» ասելով, մի առանձին յարգանքով և ժպտախառն դէմքով բարևեց մեզ և մի քանի բօպէից յետոյ պատմեց մեզ իր տաւարի անբաղդ դրութիւնը։ Ի հարկէ մենք վարժապետին մխիթարեցինք և խորհուրդ տուինք, որ եթէ վկաներով հաստատէ որ խոտի տէրը իր տաւարը չորս օր բոլորովին քաղցած է պահել, դանդատ անէ, իր հակառակորդին ծանր պատժի կենթարկեն։

«Ես մինչև անգամ, եթէ ուզենամ, կարող եմ վկաներով հաստատել, որ իմ տաւարը ամենևին նրա խոտը չէ կերել, այլ ուղղակի կասեմ թէ դողացել է», ինքնավստահութեամբ վրաբերեց վարժապետը։

Ըստ մեր խնդրանաց, վարժապետը սկսեց պարապել աշակերտների հետ։ Ես բոլորովին լուռ լսում էի, իսկ իմ ընկերը երբեմն հարցեր էր առաջարկում։ Աշակերտները համեմատաբար Ղարաալի, Մեծ Պարնի գիւղի և Համզաչիի աշակերտներից լաւ էին գլխաւորապէս այն կէտում, որ ժամագիրը, Նարեկ... չէին սովորում, բոլորն էլ նոր դասագրքերի վրա էին կարդում։ Վարժապետը շատ քաղցրութեամբ էր վարվում իր աշակերտների հետ. նրա գործածական բառերն էին «դուն ասա, դառնուկս, ինչ կը նշանակէ... դառնուկ ջան, ուղիղ նստեցէք, դառնուկներս...»—Իսկ ինչ վերաբերում է դպրոցի անբաղդ, անտէր և անմխիթար դրութեան, ախ, Տէր Աստուած, ինչ ասեմ, անտանելի էր, սարսափելի էր, խայտառակութիւն էր, կատարեալ անպատուութիւն էր. յատակը գետնի մակերևոյթից երկու արշին ցած, անպատմելի խոնաւ, առանց տախտակամածի և աշակերտների ոտքերով քայքայվել խորթ ու բորտ հորեր են դառել։ Առաստաղի կոճերը ծխից դեղնել (աշակերտները պատմեցին որ այդ տանը առաջ հացատուն է եղել) ածուխ էին դառել։ Անձրևների ժամանակ առաստաղի կոճերի գլխից առուակներ գալով, պատերի երեսին ճիւղաւորվելով զանազան տեսակ նկարներ էին կազմել։ Շատ տեղեր պատերի ծեփը թափվել և այդ թափած տեղերը սպիտակ մամուռը մատնաչափ հաստացել։ Եթէ ինձ չէք հաւատայ, դուք, յարգելի հոգաբարձուք, մի բօպէ նեղութիւն քաշէք, ներս մտէք դպրոցը, նայեցէք հիւսիսային կողմի երրորդ կոճի վրա և տեսէք թէ ինչպիսի գեղեցիկ խոշոր սունկեր են դուրս եկել այդ տեղ. այդ բոլորը խոնաւութիւնից է։ Մի փոքր լուսամուտ ունէր, որ ծածկված էր, համարձակ կարելի է ասել, 10 սարդի ոստայններով և մի շատ մեծ լուսամուտ մեծ մասը առանց ապակու։ Այդ օրը եղանակը ցուրտ էր, անմեղ երեխաները ցրտից կապտել ու դեղնել էին։ Աշակերտաց նստարանները չինված էին խակապէս գինետներում դրված սեղանների ձևով։ Աշակերտները նստած էին շարժական կոպիտ նստարանների վրա սեղանների երկու կողմը, իրար դէմուդէմ, ուրեմն դրատախտակը մնում էր մէկ շարք աշակերտների քամակում։ Պահարաններ չունենալու պատճառով խեղճ աշակերտները իրանց դտակները, խուրջինները, բոլոր դասական առարկաները... դարսել էին սեռանելով կամենում են չահեցնել, և ի վերջոյ մի քանի տարուց յետոյ երբ արդէն թխսած ձուերից նոյն քանակութեամբ ճագեր կը դուրս գան, կուզեմ ասել, ինչ ժամանակ դրամագլուխն իրանց դրպանը կը մտնի, այն միջոցին էլ ով գիտէ, Զէյթուն ուղարկելու են, թէ «Արարատեան ընկերութեան», կամ թէ իրենց դրպանը դնելու են. և ահա այս մտքերն են պատճառ, որ իրենց մէջ ես այդ հանգանակութեան վրա առանձին գանձապահներ և քարտուղարներ են նշանակած չահասիրական նպատակներով։ Այս մասին նուիրատուների մէջ ես սկսել են նոր ի նորոյ կասկածներ և դժգոհութիւն յառաջ գալ. խնդրում եմ որ գործին աւելի մօտ ծանօթ անձինք, կարևոր և գոհացուցիչ բացատրութիւնը տան այս իրողութեան մասին, և այդ գումարը, որպէս իցէ փութով տեղ հասցնեն, իրագործելով նուիրատուների բարեգործական նպատակը։

***

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

25 սեպտեմբերի

Կարդալով «Մշակի» 157 №-ի խառն լուրերի մէջ Ախալցխայում հաւաքված մի հազար բուբլի հանգանակութեան մասին յօգուտ Զէյթունցիների, հարկ եմ համարում յայտնել, որ ինչպէս լսած եմք, որպէս թէ մի պարոնի խորհրդատուութեամբն, ոմանք այդ հանգանակութիւնն իրենց ձեռքին տակ առնելով կամենում են չահեցնել, և ի վերջոյ մի քանի տարուց յետոյ երբ արդէն թխսած ձուերից նոյն քանակութեամբ ճագեր կը դուրս գան, կուզեմ ասել, ինչ ժամանակ դրամագլուխն իրանց դրպանը կը մտնի, այն միջոցին էլ ով գիտէ, Զէյթուն ուղարկելու են, թէ «Արարատեան ընկերութեան», կամ թէ իրենց դրպանը դնելու են. և ահա այս մտքերն են պատճառ, որ իրենց մէջ ես այդ հանգանակութեան վրա առանձին գանձապահներ և քարտուղարներ են նշանակած չահասիրական նպատակներով։ Այս մասին նուիրատուների մէջ ես սկսել են նոր ի նորոյ կասկածներ և դժգոհութիւն յառաջ գալ. խնդրում եմ որ գործին աւելի մօտ ծանօթ անձինք, կարևոր և գոհացուցիչ բացատրութիւնը տան այս իրողութեան մասին, և այդ գումարը, որպէս իցէ փութով տեղ հասցնեն, իրագործելով նուիրատուների բարեգործական նպատակը։

***

բաղկացած մի դպրոց չինելը։ Հարիւր հազար մանէթի (թող լինի 50,000) կարողութիւն ունեցող պ. Մատինեանցը մինթէ կը զլանայ 400 ր. դպրոցի չինութեան նուիրել։ Իւրաքանչիւր տուն էլ եթէ երեք սայլ քար բերէ և 10-նական ր. վեր դնեն, բոլորը միասին կը լինի 300 սայլ քար և 1400 բուբլուց դեռ մի բան էլ աւելի, որով շատ հեշտութեամբ կը չինվի մի համեստ և գեղեցիկ դպրոց։ Բայց ով է տէրը, ով է մտածողը։ Ծխական քահանաները, տէր-Եսայի հայրիկը, հարուստ կալուածատէրը, ո՛չ, ո՛չ. նոքա իրանց գործերովն են զբաղված։ Այստեղ միտս եկաւ (78 ամի № 112) համզաչիմանցու նամակը «իսկ ինչ վերաբերում է դպրոցի չինութեան, արդէն սկսել են և առաջիկայ սեպտեմբերին պատրաստ կը լինի...» զարմանալի ստախօսութիւն։ Ոչ միայն սկսել են, բայց չեն էլ մտածել և չեն էլ ուզում մտածել, ուրեմն այդ տեսակ անխոհեմ ստախօսութիւն անելը կը նշանակէ ժողովրդի պակասութիւնները ծածկել և հետևաբար ժողովրդին մոլորացնել, ինչպէս ասում էր «Մշակի» առաջնորդող յօդուածներից մինը։

Թէև գիւղացիք խոստացել են վարժապետին փոքր ի շատէ յարմար բնակարան տալ, բայց այսօր խեղճը բնակվում էր իր բարեկամի տանը, մի նորաշէն խոնաւ և անյարմար բնակարանում։ Մահճակալը դրված էր թաց գետնի վրա։ Լուսամուտը կտուրից և առանց ծածկոցի լինելու պատճառով անձրևը ուղղակի վարժապետի մահճակալի առաջ մինչև ցեխ էր գոյացրել։ Վարժապետը իր անմխիթար դրութիւնը մեզ բացատրելուց զկնի աւելացրեց որ «ահա հինգերորդ ամիսն է որ դեռ մի կօպէկ վարձ չեն տուել, դեռ անցեալ տարվայ վարձերից 60 ր. մնում է։» Կարդացինք հոգաբարձութեան ստորագրութեամբ վաւերացրած վարժապետի պայմանը և տեսանք որ նրա ոչ մի կէտը կատարված չէր ճշդութեամբ։ Ցանկալով պ. Հալաճեանցին յորեան համբերութիւն, միասին դուրս եկանք ննջարանից և պատահեցինք ծխատէր քահանային, որ մի առանձին պարսկական ճաչակով բարևեց պ. Ցակովբեանցին (իմ ընկերին) և իսկոյն աւելացրեց. «պ. Ցակովբեանց, քաղցած չէք, գնայինք մի քիչ հաց ուտէք, լաւ կը լինէր...»

Դեռ տէր հայրը խօսքը չէր լրացրել, պ. Ցակովբեանցը յօժարութիւն յայտնեց գնալու՝ «Տէր հայր, շատ քաղցած ենք, ձեռաց մի քիչ հաց ու մածուն որ տաս ուտենք, շատ կը պարտաւորացնես....» ասելով, մօտենում էր տէր-տէրի դրանը։ «Մածուն...ձեռաց...կմկմացնելով խօսքը կտուրը դցեց և կամաց կամաց յետ ընկաւ և վերջապէս խրճիթների մէջ անհետացաւ, իսկ մենք մածուն, մածուն ասելով, քաղցած փորով դուրս եկանք Համզաչիմանից, դէպէ Ղարաքիլիսա....

Ճանապարհին ընկերս գանգատվում էր թէ «տէրտէրի մածունը շատ թթու էր, ատամներս խարաբ եղաւ, էլ մի ամիս չեմ կարող հաց ուտել։»

Սարիբէգ Տէր Մելքիսեդեկեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

25 սեպտեմբերի

Կարդալով «Մշակի» 157 №-ի խառն լուրերի մէջ Ախալցխայում հաւաքված մի հազար բուբլի հանգանակութեան մասին յօգուտ Զէյթունցիների, հարկ եմ համարում յայտնել, որ ինչպէս լսած եմք, որպէս թէ մի պարոնի խորհրդատուութեամբն, ոմանք այդ հանգանակութիւնն իրենց ձեռքին տակ առնելով կամենում են չահեցնել, և ի վերջոյ մի քանի տարուց յետոյ երբ արդէն թխսած ձուերից նոյն քանակութեամբ ճագեր կը դուրս գան, կուզեմ ասել, ինչ ժամանակ դրամագլուխն իրանց դրպանը կը մտնի, այն միջոցին էլ ով գիտէ, Զէյթուն ուղարկելու են, թէ «Արարատեան ընկերութեան», կամ թէ իրենց դրպանը դնելու են. և ահա այս մտքերն են պատճառ, որ իրենց մէջ ես այդ հանգանակութեան վրա առանձին գանձապահներ և քարտուղարներ են նշանակած չահասիրական նպատակներով։ Այս մասին նուիրատուների մէջ ես սկսել են նոր ի նորոյ կասկածներ և դժգոհութիւն յառաջ գալ. խնդրում եմ որ գործին աւելի մօտ ծանօթ անձինք, կարևոր և գոհացուցիչ բացատրութիւնը տան այս իրողութեան մասին, և այդ գումարը, որպէս իցէ փութով տեղ հասցնեն, իրագործելով նուիրատուների բարեգործական նպատակը։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս 15 սեպտեմբերի

Ձեր լրագրի № 147 կարդալով Մամբրէ վարդապետի նամակը, որով հայր սուրբը ազատ է համարում իրան անկանոն գործողութիւններից և ակնարկում է իմ երեսփոխանական գործունէութեան համար մինչև այժմ հաշիւ չը տալու վրա, հարկաւոր եմ համարում պատասխանել որ պարզվի էութիւնը։ Ես ներկայ տարոյս օգոստոսի 15-ին վիճակային կոնսիստորիային ներկայացրի մի խնդրագիր, որով թոյլատրութիւն էի խնդրում եկեղեցու ծածկը վերանորոգելու համար իմ աշխատութիւնով հաւաքած գումարից ծախսել 200 ր.։ Այդ խնդիրքը ընդունվելով անդամների կողմից մակագրվեցաւ, իսկ հայր նախանդամը պատռեց մակագրված խնդրագիրը և սպառնաց փակել եկեղեցին։ Ես պատասխանեցի, որ հայր սուրբը եկեղեցի փակելու իրաւունք չունի։

Ինչ որ վերաբերում է իմ մինչև այժմ հաշիւ չը տալուս, կասեմ հետևեալը. ես կարդված լինելով երեսփոխան, պարտաւոր եմ իմ հաշիւս տալ եկեղեցու ծխականներից ընտրված հաշւապահներին, և ոչ Մամբրէ վարդապետին։ Հաշւապահանջութիւնը պիտի լինի երեք տարին լրանալուն պէս համաձայն կարգադրութեան սրբազան առաջնորդի։ Ամենին շատ լաւ յայտնի է, որ ինձ իմ նախորդ երեսփոխանից յանձնվել է միայն 5 ֆունտ սպիտակ և 5 ֆունտ դեղին մոմ և այլ ևս ոչինչ, իսկ այժմ եկեղեցու բոլոր զարդերը, եկեղեցու և ուխտաւորաց սենեակների վերանորոգութիւնը իմ աշխատութեանն են պարտաւոր։

Յովհաննէս Թամամշեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Тифл. Вѣстн.» լրագիրը և Ս. Պետերբուրգի «Голосъ» լրագիրը հաղորդում են, որ Ղարսի հայոց ծխական դպրոցները փակվեցան այնտեղի գեներալ—նահանգապետ Ֆրանկինի հրամանով։ Նոյնը հաղորդում են և մեզ մեր թղթակիցները։ Ռուս «Тифл. Вѣстн.» լրագիրը շատ ուղիղ է նկատում որ դա երևի մի տարակուսութիւն է և որ գեներալ Ֆրանկինի լաւ ծանօթ չը լինելով հայոց հոգևոր դպրոցների վերաբերութեամբ օրէնքի հետ, նայել է Ղարսի հայոց դպրոցների վրա ոչ թէ որպէս հոգևոր դպրոցների, այլ որպէս մասնաւոր դպրոցների վրա։

—

Մեզ հաղորդում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ այնտեղ արդէն ցրտերը սկսվել են։ Մթերքների գները չափազանց բարձր են։

—

Մեզ հաղորդում են ԷՋՄԻԱԾՆԻՑ, որ այդ վանքում ծառայողներից մէկը խարդախ ստորագրութեամբ փոստատանից ստացել է 1140 ռուբլի։ Այդ գումարը վանքապատկան փողէր։ Այս լուրի ճշդութեան մասին մենք երաշխաւոր չենք։

—

Վաղը, հոկտեմբերի 3-ին, Արծրունու թատրոնում բարեգործական նպատակով ռուս թատրոնասէրները կը տան մի կօնցերտ—ներկայացումն, որին կը մասնակցեն տ. տ. Լվովա, Նվեռլովսկայա և պ. պ. Բարետսկի, Բերլիձէ և այլն։ Ներկայացման ժամանակ կը լինեն կենդանի պատկերներ։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի Բարալէթ գիւղում հիմնված է գիւղական դպրոց, որ, ինչպէս լսում ենք, պահպանվում է «ուղղափառ քրիստոնէութիւնը վերականգնելու կովկասեան ընկերութեան» միջոցներով։ Չը նայելով, որ ուսումնարանի աշակերտների մեծամասնութիւնը հայերն են կազմում, նրանց համար հայ կրօնուսոյց չը կայ։ Հայ մանուկների կրօն ուսուցանում է վրացի քահանայ։ Այդ երեխաները վրաց եկեղեցում դպրութիւն են անում։»

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ. «Մեր գիւղերում ջրօրհնէքին քահանան յայտնում է ժողովուրդին, որ նոքա կարող են կնքահայր դառնալ Ս. Խաչին։ Եկեղեցական հանդէսը առժամանակ ընդհատվում է և սկսվում է ամրդախօսութիւն։ Ամենից շատ փող տուողը կնքահայր է լինում։»

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ Վանից ստացվել են անգլօ-թիւրքաց համար երկիւղալի լուրեր։ Շեյխ Աբդուլլան ապստամբվել է և զէնքը ձեռին գալիս է Վանի վրա։ Հայերանալի քիւրդերը, որ թափառում են դաշտավայրերում Բայազէտից սկսած մինչև Վանի լճակը, նմանապէս զէնք են բարձրացրել։ Մարշիմուն Հէյքարեցի, այսօրինների ցեղապետը, անցել է ևս ապստամբների կողմը։ Թիւրքերը բատալիօններ են ուղարկում Վան և Բայազէտ, որտեղ սպասում են Սամիհ փաշային, որ նշանակված է չորրորդ զօրաբաժնի մուշիր և հրամանատար այդ արշաւանքի։ Այս ամեն գործերում ծաղրալի է նայել անգլիացոց վրա, որոնք պահպանում են թիւրքերի ոգեորութիւնը։ Այս օրերս սրընթաց կերպով Վանից եկան Էրզրում երկու անգլիական գործողներ։ M-rs Crowder և Tozer։ Այս պարոնները կատարեցին իրանց ճանապարհը երկար պտուտներով և Սամսօնից սկսած այցելեցին Ամասիա, Սվազ, Էրզինգեան, Մուշ, Բիթլիս, Վան, Մալազկերտ և Էրզրում։

—

Լսում ենք որ ՆՈՒԽՈՒ գաւառի ուտիաբնակ Վարդաշէն գիւղում, ուր երեք հարիւր տուն լուսաւորչական են և երկու հարիւր յունադաւան, արիւնահեղ երկպառակութիւններ են սկսվել երկու դաւանութիւններին պատկանող ուտիացիների մէջ։ Երկպառակութեան պատճառը համարվում են մի քանի այնպիսի չարամիտներ, որոնց հասարակական դրութիւնից մեծ օգուտներ կարելի էր սպասել ուտիացիների համար, փոխանակ այն խարդախութիւնների, որոնցով նոքա վրդովում են այժմ խեղճ ժողովրդի խաղաղութիւնը։

—

Այս տարի ԹԻՖԼԻՍԻ զինուորական գիմնազիա մտնող աշակերտների թւում ընդունված են չորս աշակերտներ, որոնք մտել են հայ կանդիդատների թւում։ Նոցանից երեքը, Սիլիկովներ, յունադաւան են, իսկ չորրորդը՝ Զակէլի—կաթոլիկ։ Թէպէտ շատ ուրախալի է որ ազգութիւնները էլ կրօնով չեն բաժանվում, այլ ազգութիւնով, բայց ցանկալի կը լինէր որ այդ այլադաւան երիտասարդները ուշադրութիւն դարձնէին իրանց ազգային լեզուն սովորելու վրա, մանաւանդ որ նոքա բոլորն էլ երթևեկութիւն ունեն շատ հայ տների հետ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Վաղարշակերտէն հետևեալ սրտաճմլիկ խընդրագիրը ղրկուած է Կարնոյ Գեր. Առաջնորդին և Քաղ. ժողովոյն։

Գեր. Ս. Հայր բարեխնամ առաջնորդ Կարնոյ վիճակին և Մեծ. անդամք քաղաքական ժողովոյ։

Ձերդ ազգասիրութեան և արդարասիրութեան վրա մեծապէս վստահանալով է որ սկսած եմք յաճախակի ձանձրոյթ պատճառել Ձերումդ բարձր Սրբազնութեան և պատակռելի ժողովոյդ, զի հարստահարութիւնք և տառապանք բազմադիմիք և իւրաքանչիւր օր բազմանալով՝ կը ծանրանան վշտաբեկ ժողովրդեանս վրա, որ արդէն յուսահատ եղած է բոլորովիմբ։

Թշուառ ժողովուրդս զաղթականութենէ վերադարձէն յետոյ՝ մինչ կառավարութեան և այլոց խնամոց կը կարօտէինք, այժմ չը վերադարձողաց անվճար տուրքերը մեզմէ պահանջուելէն յետոյ, կը հրաւիրուինք բռնութեամբ կառավարութեան կողմանէ՝ որ Կարսէն զաղթական Թրքեր և լեռնաբնակ Քրդեր ընդունելով մեր ընտանեաց մէջ՝ կերակրենք և սնուցանենք զանոնք և իրենց խաշինքը, և փոխարէն ընդունինք իբր վարձ մեր հիւրընկալութեան՝ հայհոյութիւն կրօնի և բռնաբարութիւն մեր պատուոյն։

Այս վիճակը ծանրացած է բոլոր Հայ գիւղօրէից վրա, մասնաւորապէս Խաստուրի վրա, ուր հազիւ քսան տուն վերադարձած են։ Այժմ կառավարութիւնը կը բռնադատէ ըզգիւղացիս, որ Զիլանցի Մէհմէտ աղայն իւր 20—30-ի չափ ընտանիքներէն միայն տասը ընդունին իրենց տները։ Այս բանը գիւղացւոց կարողութենէն վեր է, և ասկից զատ՝ եթէ տասն տուն իրենց ոտքին անգամ մը տեղ ը-նեն գիւղին մէջ, միւսներն ալ իրենց ազգականներէն չը կարողանալ բաժնուելու պատրուակաւ, նոքա ևս խեղճ գիւղացւոց վրա բեռ պիտի լինին։ Մեր վիճակը, Սրբազան Հայր և Մեծ. անդամք, այնպէս է եղեր, որ Կարսէն գաղթական բոլոր Թուրք և Քուրդք աչքերնին տնկած են Հայոց գիւղօրէից վրա, և կուզեն տիրապետել և պիտի յաջողին ալ ի շնորհս կառավարութեան Թոյլտուութեան և մանաւանդ բարեհաճութեան, եթէ շուտափոյթ օգնութիւն մը չը հասնի մեզ։

Դարձեալ Խաթուն օղլիք Համատ Հայ գիւղին տիրելով՝ Երեանի չափ Հայ ընտանիք, որք Կարսէն գաղթեցին, տեսնելով որ անկարելի է իրենց բնակարաններն ու արտերը ձեռք ձրգել, վերստին ետ դարձան։ Մնացեալ 40 տան չափ Հայեր, թէպէտ իրենց բնակարանաց և արտերու տէրն են, սակայն սոյն բռնաւորաց ձեռքը գերի լինելով՝ և խոտերնին և այլն իրենք քաղելով՝ այլ կառավարութեան հրամանաւ Խաթուն օղլիներու ձրի տալով, և խոտի և այլն տուրքը իրենք ստիպելով վճարել, նոցա ալ վիճակն ինչպէս յայտնի է՝ անտանելի եղած է. և կը պատրաստուին խըմբովին գաղթել՝ հակառակ կառավարութեան և ազգին շահուց։ Զեմք թուեր, Սրբազան Հայր, և Մեծ. տեարք, միւս գիւղօրէից կրած զրկանքն և հարստահարութիւնքն։ Այս ամենուն մէջ կը համարձակիմք ըսել որ տեղոյս կառավարութիւնը մասնաւոր դիտում մ'ունի զՀայս բնաջինջ և սոյն աշխարհէն բոլորովին անհետ ընելու։ Հայք ամեն ժամանակ կառավարութեան ատեաններու մէջ հայհոյանաց, զանակոծման, նախատանաց և սպառնալեաց ենթակայ եղած են, 'ի ներկայութեան մոլեռանդ Քրդաց, որք կը հաստատուին և կը քաջալերուին իրենց 'ի վնաս մերազնէից ընթացից մէջ։ Մեր դայմագամին բռնած այս ընթացքէն՝ կենաց, պատուոյ և ընչից ապահովութիւնը բոլորովին կորուսած եմք և չեմք կարող այս տեսակ պաշտպանի մը կառավարութեան տակ ապրիլ։ Դպրոցասիրաց—Արևելեան ընկերութեան տեսուչ Մեծ. Մ. Էֆ. Սարեան, մեր վիճակին ծանրութիւնն սպանութեանց քննիչ հաղարապետին թէպէտ յայտնեց, բայց խոստումէ զատ ուրիշ շահ չունեցանք ցարդ։

Երկու Հայ սպանելոց խնդրոյն մէջ հաղարապետ Մէհմէտ պէյի ջանքն և շրջակայնեռրն երևցող աւազակները ձերբակալելու խընամքը մեծ են արդարև։ Ոճրագործաց մին երևան ելաւ. սակայն Գայմագամն ինքն քուրդ լինելով թէպէտ դժուարութիւններ կը հանէ Հազարապետին առջև, բայց արդարութիւնը մօտ օրէն երևան պիտի ելնէ 'ի շնորհս հազարապետին, որ յաջողեցաւ իսկ չորս Քիւրտ աւազակապետներ ձերբակալել զարմանալի քաջութեամբ 500-ի չափ զինեալ քրդերու մէջէն, որք գաւազակս ազատելու եկած էին։

Ահա սոյն կէտերը բարձր Սրբազնութեանդ և պատկառելի ժողովոյդ խորին ուշադրութեանն յանձնելով՝ կը խնդրեմք խոնարհաբար պատկառելի ժողովէդ որ համբիք 'ի սէր ազգութեան և կրօնի մեր ցաւոց և կրած ծանրը հարստահարութեանց և զրկանաց վերջ մը տալ, և չը թողուլ որ վշտացեալ և տառապեալ ժողովուրդս զաղթականութեան սոսկալի և դառն բաժակը ցմրուր մէկ մ'ալ քամելու դժբաղդութիւն ունենայ

(Ստորագրութիւնք)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 26 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) Բարոն Գայմերլէ նշանակված է արտաքին գործերի մինիսար և մինիստրների ընդհանուր խորհրդարանի նախագահ։

ԱԼԼԱՀԱԲԱԴ, 26 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) Կաբուլից լուրեր չը կան. Զայմուշտները Ցուլլից այն կողմը քանդել են հեռագրական յարաբերութիւնները։

ԼՕՆԴՕՆ, 27 սեպտեմբերի (8 հոկտեմբերի։) Սեպտեմբերի 24-ին Բօբէրտս Խորասանից հեռագրում է հետևեալը։ Դէպի Կաբուլ տանող բոլոր ճանապարհներով ուղարկված են հետախուզական խումբեր. նրանք պատահեցան Թշնամու մի մեծ բանակի, որը գալիս էր քաղաքից, և վերադարձան. սրանից յետոյ Խարասաիբի և Կաբուլի մէջ գտնված բլուրների վրա յայտնվեցան Թշնամի զօրքերը և քաղաքացիք. մի և նոյն ժամանակ մեր բանակի երկու թևերի վերև գտնվող բլուրների վրա յարձակվեցաւ Գիլզայ կոչված ցեղը։ Մի կատաղի ճակատամարտից յետոյ, բրիտանական զօրքերը տիրեցին բլուրներին և Թշնամուն փախցրին այդ տեղերից. այս ճակատամարտի միջոցին անգլիացիք սպանվածներով և վիրաւորվածներով միասին 85 հոգի կորցրին։ Թշնամուց խլված են 12 թնդանօթներ և երկու դրօշակներ, և որովհետև մերձականերում բազմաթիւ Գիլզայներ կան, պահապաններ են դրված։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ «С. Петерб. Вѣдом.» լրագրի հատով ծախելը թոյլ է տրված։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ վաղը սեպտեմբերի 29-ին չինական արտաքոյ կարգի դեսպան Զունգ-Խօդը Ս. Պետերբուրգից կուգևորվի Մարսելիա, ուր նաև կը նստի և Սուէզի վրայով Չինաստան կը վերադառնայ. չինական դեսպանը նոր դաշնագիրն ստորագրելուց յետոյ, վերջին ճնաս բարեաւ ասաց Կայսրին Լիվադիայում։ Դաշնագրի զօրութեամբ Կուլջեի մի մասը զիջած է Չինաստանին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի։ Բարոնօվ կազմեց կրէյսերեան պատերազմի ծրագիրը։

ՆԻՒ-ԻՕՐԿ, 27 սեպտեմբերի (9 հոկտեմբերի։) Ուտախեան հնդիկները խնայելով կանանց և երեխաներին, կոտորեցին «Սպիտակ գետի» ընկերութեան բոլոր պաշտօնատարներին և գլխաւոր գործակատար Միկէրին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակն առաջին շրջանի արժէ 94 ր. 50 կ., երկրորդ 93 ր. 62 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 227 ր., երկրորդ 223 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 50 կ., երկրորդ 91 ր. 50 կ., ոսկի 7 ր. 63 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,87 պէնս. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 212 ր. Փարիզի վրա 271 Ֆրանկ։ Տրամադրութիւնն առաջ թոյլ էր, յետոյ ամուր։

ԼՕՆԴՕՆ, 29 սեպտեմբերի (11 հոկտեմբերի։) Զիլանցիք գերեցին բոլոր պէրուական նաւատորմը։ Սիմլայից հաղորդում են, որ Բօբէրտսը սեպտեմբերի 26-ին Կաբուլի դիմացն էր. գեներալ Մասսի, որ ուղարկված էր Կոզիստանի ճանապարհով ավգանցիներին արգելելու, որ նրանք չը շրջապատեն Բատիանը, Շալպուրի մօտ ավգանցիներից 78 թնդանօթներ խլեց։ Բէկէրին և Մակֆէրսօնին բաւականին մեծ զօրք են տուել, որպէս զի նրանք Բալահիսարի բարձրաւանդակներից իջնող Թշնամի բանակի վրա յարձակվեն։

ԲԷԼԳՐԱԴ, 29 սեպտեմբերի (11 հոկտեմբերի։) Սեպտեմբերի 28-ին այստեղ սարսափելի երկրաշարժ եղաւ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» ստացել է

1 Սրուանձտեանց-ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ր. 25 կ.
2 Ս. Մանդինեանց-ԿՐՕՆՔ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
3 Բժիշկ Ա. Բաբայեանց ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ր. —
4 Ա. Բահաթրեանց - ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ — 25 կ.
5 Երկաթէ ԴԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ 1 ր. —
6 Ց. Շիշմանեանի - ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՒԱՔՈՒՄՆ Ա. 1 ր. 15 կ.
7 Փարոս 1879 — — — - թ. 1 ր. —

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ զրաղրութիւն ունէին, այսուհետև իրանց մասնաւոր նամակներն ուղղել դէպի Երևան, ուր նա այս տարի պիտի մնայ ուսուցչական պաշտօնով, իսկ պատուէրները ըստ առաջնոյն թող ուղղեն Կենտրոնական զրավաճառանոց, ուր ինքը պահպանում է իւր մասնակցութիւնը: Երևան քաղաքի և նորա շրջակաների ուսումնարանների վարչութիւնները՝ դիւրութեան համար, իրանց դրամաւոր պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դէպի պ. Տէր Ղևոնդեանը, որը կաշխատի ամենայն արագութեամբ կատարումն տալ նոցա պահանջներին: Ցեռոյ վճարելու պայմանով զրքեր ցանկացողները դիմում են ուղղակի զրավաճառանոց:

2—3

ՁԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՈՐՎԷԳԻԱՅԻ ՄԱՔՐԸՆԹ ՁԻԹԻՑ, որ պատրաստված է Մոսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՖԷԼԴՏԻՑ

Գիւոյի Ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Ձիթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖՐԱՆՍԻԿԱՆ (ԳԻՒՕՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նոքա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԼՈՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մոսկվայում, Լուբեանկի դեղատուն Նա. Ի. Գիրշֆէլդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրինովի և Բօստոմովի դեղատուն:

15—25

ՎԱՃԱՌՔ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏԻ ՎՐԱ, ՇԻՕԵՎԻ ՏԱՆԸ, պ. Միրզոյեվի ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒՄ, Լուսանկար Վեստլեի կարգին, ԿԻՐԱԿԻ ՆԵՐԿԱՅ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ից ըստ կված ԵԿՈՂ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ամբողջ ամսվայ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԽՎԵԼՈՒ են 250-ից աւելի ԶԻԹԱՒՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ զանազան մեծութեան, ամեն տեսակ բոմանդակութիւնների (չը բացառելով և կրօնականները, որոնք պիտանի են եկեղեցիների համար:) ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՐԵՒԵԼԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻՆ ԵՆ և դրված են հարուստ ոսկեզօծած մաքուր շրջանակների մէջ: ՄՈՒՏՔԸ ԸՆԿԱՐՉ Է: Նոյեմբերի 1-ից յետոյ վաճառքը կը դադարեցնվի, որովհետև մնացած պատկերները կուղարկվեն:

2—10

Ահաւասիկ այն բարեսէր ազգայինք որ հաճեցան յանձն առնուլ նպաստ հաւաքելու «ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑ—ԱՐԵՒԵԼԵԱՆ» ընկերութեան համար: ԹԻՖԼԻՍ. Պ. Աբգար Յովհաննիսեան Պետրոս Սիմոնեան, բժիշկ Աւետիք Բաբայեան: ԵՐԵՒԱՆ. Ռուբէն Զալալեան, Վասիլ Եղիազարեան, Սարգիս Բէգնազարեան, Տիգրան Ափրիկեան: ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Աբիսողոմ Յովհաննիսեան, Հայրապետ Ղուկասեան: ԱԽԱԼՔԱԼԱՔ. Արժ. Տէր Խորէն քահանայ: ԱԽԱԼՑԽԱ. պ. Գասպար Մելքոմեան, Մկրտիչ Ճարակեան, Մովսէս Սամուէլեան, Յովակիմ Գեղամեան: Այդ անձեր են որք յուսադրեցին զիս ամէն միջոցներով ընկերութեան դպրոցներուն օգտին աշխատել:

Ց. ՇԱՀՆԱԶԱՐ

5—5

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ:

Դուրս եկաւ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ՝ «Ծերենցի - ԵՐԿՈՒՆՔ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ.» վերնագրով — Թորոս Լևոնի հեղինակի նոր աշխատասիրութիւնը:

ԳԻՆՆ Է ԱՄԷՆ ՏԵՂ ՄԻ ՌՈՒԲԼԻ: Այս օրերս մամուլի տակ կընկնի պ. Հ. Ղուկասեանցի աշխատասիրած ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ հին դարը Զաք. Գրիգորեանցի հրատարակութեամբ:

Вышла въ нѣмецкомъ переводѣ г. А. Амирханянца лекція Григорія Арцруни «Объ экономическомъ положеніи армянъ въ Турціи.» Цѣна брошюры 25 копѣекъ.

4—5

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ «ԳՈՒՐԶԻ» անուանված քարվանսարան, որ ունի 116 ԴՈՒՌՔԱՆ, 2 մեծ ՄԱԳԱԶԻՆ պահեստի համար, 2 ԱԽՈՒԱՆՈՑ, 2 ՍԵՆԵԱԿՆԵՐ խոհանոցով և մեծ ԱՒԱԶԱՆ մշտական ջրով: Սորա հետ ունի նմանապէս ԴԱՏԱՐԿ ՏԵՂ 4000 քառակուսի սաժէն: Ցանկացողները ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին կարող են դիմել Պ. ԲԱՂԴԱՍԱՐ ԽՈՍՐՈՎԵԱՆՑԻՆ, Թիֆլիսում, Գանովսկայա փողոցի վրա, ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ:

15—20 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
և
Տարրական Ուսումնարան

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 5-ին 1879 թ:

Մանկական Պարտէզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը:

Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Ուսումնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են գիմնազիանների 1 և 2-րորդ դասատունները մտնել:

Սօլօլակի, Վելիամինովսկայա փողոց, Իշխ. Ամատունու տուն, № 11. 4—4

ՏԵՂԵԿԱՑՈՑՑ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2 — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 1-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	15
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրիչի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% Վիդրիչի »	230	—
Մարսելի կուրսը 270—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	9	45
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը . . .	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու . . .	7	30
» միւս տեսակը . .	7	15
» չաքար աւազը. .	5	30
» տրանզիտը . . .	5	30
» մաքսը վճառած .	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից . . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	40
Բուրդը թուշի. . . .	7	50
» թարաքամի . .	4	—
Աւիւրը Շորագալու . .	2	20
» Երևանի . . .	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ. .	180	—
Կախեթուանը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մօկօի	26	—
« լիւանի . . .	22	—
« Մանտինիյոն . .	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները .	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա. . . .	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ. .	1. 29	11. 59
Ռիօն. . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ:	
Փօթիից. . .	9. 13	
Ռիօն. . . .	12. 13	
Միխայլօվօ . .	5. 39	1. 37
Գօրի . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ. .	90	68	38
Գօրի . . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ. .	5. 22	3. 92	2. 18
Ռիօն . . .	9.	6. 75	3. 75
Փօթի. . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկովի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակ արժէ .	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ. .	7
Ամերիկա	7
Պարսկաստան . . .	7
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսցեվ և Գօրալեվիչ նեղքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ վիրաբուժական հ., Ռէյխ աչքի հ., Վերմիշեվ նեղքին հ., Ժուրավլէվ վենէրական և կաշու հ., Բաբով կրծքի և նեղքին հ.:

Չորեքշաբթի. Լիսցեվ նեղքին հ., Աստուածատուրով կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Ռուդկովսկի նեղքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և միզային գործարանների հ., Ժուրավլէվ ջղային հ.: Բաբով կրծքի և նեղքին հ.:

Ուրբաթ. Լիսցեվ նեղքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վենէրական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշեվ նեղքին հ., Ռէյխ աչքի հ., Ժուրավլէվ վենէրական և կաշու հ.:

Օրբէլիա, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՄՕՍԿՎԱ. Գ. Խ. Տպում ենք ձեր յօդուածը: Բայց ամբողջ ճառը աւելորդ ենք համարում, քանի որ ամենանշանաւոր տեղերը քաղած էք ձեր յօդուածի մէջ:

—ՍՏԱՎՐՕՊՕԼ. Ս. Տ. Զ. Հոկտեմբերից կուղարկենք «Մշակ»: Երեք ամսվայ բաժանորդագինը երեք բուբլ է:

—ՍՏՐԱՍԲՈՒՐԳ. Ա. Ա. Ձեր յօդուածը կը տպենք հետևեալ համարի մէջ:

—ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Տեղացի. Ստացանք նամակը: Տպագրութեան մասին կը պատասխանենք:

—Կ. ՊՕԼԻՍ. Տ. Մ. Պ. Ըստացանք ձեր գեղեցիկ նամակը: Կը պատասխանենք:

Дозволено Цензурою 1 Октября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона